Պատմության օլիմպիադայի դպրոցական փուլ (2025-2026 ուստարի)
9-րդ դասարան (տևողությունը՝ 90 րոպե)

Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

1. Ինչպե՞ս էր կոչվում Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո Անդրկովկասում ստեղծված գործադիր մարմինը:
1/ Անդրկովկասյան կոմիսարիատ 2/ Անդրկովկասի Սեյմ 3/ Հատուկ կոմիտե 4/ Ազգային խորհուրդ

2. Ո՞ր թվականին սելջուկ-թուրքերը առաջին անգամ ներխուժեցին Հայաստան:
1/ 1047 թ. 2/ 1048 թ. 3/ 1054 թ. 4/1064 թ.

3. Ե՞րբ է տեղի ունեցել Արարայի ճակատամարտը:
1/ 1916 թ. մայիսի 15-ին 3/ 1918 թ. սեպտեմբերի 19-ին
2/ 1917 թ. մարտի 9-ին 4/ 1920 թ. սեպտեմբերի 9-ին

4. Ո՞ր թվականին Սողոմոն Թեհլիրյանը իրագործեց Թալեաթ փաշայի սպանությունը:
1/ 1919 թ. հուլիսի 5-ին 2/ 1921 թ. մարտի 15-ին 3/ 1922 թ. ապրիլի 17-ին 4/ 1922 թ. հուլիսի 25-ին

5. 1185 թ. ու՞մ է վրաց Թամար թագուհին նշանակել հայ-վրացական զորքերի ամիրսպասալար
1/ Սարգիս Զաքարյան 2/ Զաքարե Զաքարյան 3/ Իվանե Զաքարյան 4/ Վահրամ Զաքարյան

6. Պարթև ո՞ր արքայի հետ դաշինք կնքեց Արտավազդ II-ը:
1/ Գոտերձ 2/ Միհրդատ VI 3/ Որոդես II 4/ Հրահատ IV

7. 1151 թ. ո՞րտեղ է հաստատվել կաթողիկոսական աթոռը:
1/ Հռոմկլա 2/ Սիս 3/ Արգինա 4/ Էջմիածին

8. 1918 թ. մայիսի 11-ին ո՞ր քաղաքում վերսկսվեցին թուրք-այսրկովկասյան բանակցությունները:
1/ Տրապիզոն 2/ Ալեքսանդրապոլ 3/ Բրեստ-Լիտովսկ 4/ Բաթում

9. Ո՞ր քաղաքի անվանում է բացթողնված.
«Զօրանոցը գրաւելէ ետքը՝ ռազմիկները գերի զորքերը ---------- կը փոխադրեն, թիւով 650»:

1/ Սասուն 2/ Զեյթուն 3/ Վան 4/ Կարին

10. Ո՞վ չի եղել Հռոմում ձևավորված Եռապետության անդամ:
1/ Հուլիոս Կեսար 2/ Գնեոս Պոմպեոս 3/ Գայոս Օկտավիանոս 4/ Մարկոս Կրասոս

11. Ի՞նչ էր անվանվում Ֆրանսիայում Սահմանադիր ժողովին 1792 թ. փոխարինած օրենսդիր մարմինը:
1/ Դիրեկտորիա 2/ Ազգային կոնվենտ 3/ Գլխավոր շտատներ 4/ Կոնգրես

12. Որտե՞ղ էր Ազգերի լիգայի կենտրոնակայանը:
1/Ժնևում 2/ Վերսալում 3/ Լոնդոնում 4/ Վաշինգտոնում

13. Ե՞րբ է ձևավորվել Ավստրո-Հունգարիան:
1/ 1848 թ. 2/ 1849 թ. 3/ 1867 թ. 4/ 1868 թ.

14. Ընտրե՛ք իրադարձությունների ժամանակագրական ճիշտ դասավորությամբ տարբերակը:
ա/ Ելիզավետպոլի նահանգի կազմավորումը
բ/ Աբդուլ-Մեջիդի կողմից Թանզիմաթի հրապարակումը
գ/ Դանիել Ա Սուրմառեցու կաթողիկոս օծվելը
դ/ Ադրիանապոլսի պայմանագրի կնքումը
ե/ Գյուլիստանի պայմանագրի կնքումը
զ/ Բեռլինի վեհաժողովի բացումը
է/ «Պաշտպան հայրենյաց» կազմակերպության ստեղծումը

1/ գ, ե, դ, բ, ա, զ, է 2/ զ, դ, ե, է, գ, ա, բ 3/ գ, ե, դ, զ, է, ա, բ 4/ ե, դ, գ, բ, ա, է, զ

15. Ընտրե՛ք ճիշտ զույգերով տարբերակը:

1. Մկրտիչ Յոթնեղբայրյան	ա/ Զեյթունի ինքնապաշտպանություն
2. Հայկակ Կոսոյան	բ/ Մուշի ինքնապաշտպանություն
3. Տիգրան Անդրեասյան	գ/ Մուսա լեռան ինքնապաշտպանություն
4. Մեծն Մուրադ	դ/ Ուրֆայի ինքնապաշտպանություն
5. Գարուն Աղասի	ե/ Վանի Քաղաքամեջ թաղամասի ինքնապաշտպանություն
6. Ղուկաս Տեռվլեթյան	զ/ Սասունի ինքնապաշտպանություն
	է/ Շապին-Գարահիսարի ինքնապաշտպանություն

1/ 1-դ, 2-զ, 3-գ, 4-ե, 5-ա, 6-բ
2/ 1-ա, 2-զ, 3-գ, 4-ե, 5-դ, 6-է
3/ 1-դ, 2-ե, 3-գ, 4-զ, 5-ա, 6-է
4/ 1-ա, 2-ե, 3-զ, 4-գ, 5-դ, 6-է

Կարճ պատասխանով առաջադրանքներ:
<u>Ուշադրություն:</u> *Պարտադիր կերպով պահպանե՛ք տարբերակների հաջորդականությունը:*

16. Նշվածներից որո՞նք են Վերսալ-Վաշինգտոնյան համակարգի հետևանքները:

1/ Գերմանիան կորցնում էր իր տարածքի 1/8 մասը, ինչպես նաև զրկվում էր իր բոլոր գաղութներից:
2/ Վաշինգտոնյան խորհրդաժողովն ավարտվեց մեկ հիմնական պայմանագրի ստորագրումով:
3/ Էլզասն ու Լոթարինգիան անցել են Մեծ Բրիտանիային:
4/ Գերմանիան ազատվում էր բոլոր փոխհատուցումներից:
5/ Գերմանիային արգելվում էր ունենալ ստորջրյա նավատորմ և օդուժ, 100 հզ ավելի բանակ:
6/ Հաշտության պայմանագրեր կնքվեցին նաև Անտանտի նախկին դաշնակիցների հետ:
7/ Չինաստանում հռչակվեց «բաց դռների» և «հավասար հնարավորությունների» սկզբունքը:
8/ Համաձայնեցվում էին երկու առաջատար երկրների օդային ուժերի չափաբաժինները:

17. Նշվածներից որո՞նք են Երիտթուրքական հեղաշրջման հետևանքներ:

1/ Չեղյալ է հայտարարվում 1876 թ. գործող սահմանադրությունը:
2/ Փաստացի իշխանությունը կենտրոնանում է սուլթանի ձեռքում:
3/ Հայկական կուսակցությունները հրաժարվում են զինված ապստամբությունից:
4/ Կայսրությունում աշխուժանում է հայ կրթամշակութային կյանքը, բանտերից ազատվում են քաղբանտարկյալներ:
5/ Բազմաթիվ վտարանդի հայեր վերադառնում են Արևմտյան Հայաստան:
6/ Օսմանյան կայսրությունում դադարում են հայերի հալածանքներն ու կոտորածները:

18. Ընտրե՛ք տերմինների սխալ բացատրությունները:

1/ Դարեհ I-ի կողմից Ք.ա V դարում կառուցված շուրջ 2700 կմ երկարություն ունեցող ճանապարհը կոչվում էր Արքայական ճանապարհ:
2/ Հունական մշակույթի և տեղական մշակույթների համադրությունը անվանվումը Հելլենիզմ:
3/ Տնտեսության կազմակերպման այն ձևը, որտեղ առևտուրը կատարվում է դրամով կոչվում է դրամական տնտեսություն:
4/ Տնտեսության կազմակերպման այն ձև, երբ մարդիկ իրենց արտադրած ապրանքները փոխանակում են այլ ապրանքներով կոչվում է ապրանքափոխանակություն:
5/ Անտիոքոս III-ի ժամանակ մարզի կառավարչի պաշտոնի հետ նույնացվող քաղաքական-վարչական պաշտոնը անվանվում էր սատրապ:

19. Նշված տարբերակներից ընտրե՛ք ճիշտ պնդումները։

1/Կիլիկիայի հայերի համախմբման առաջին փորձը 1050-1060 թթ. կատարել է Գող Վասիլը։

2/ Ռուբեն իշխանին (1081-1095 թթ.) հաջողվում է ընդարձակել իր տիրույթները մինչև Միջերկրական ծով։

3/ Լևոն I իշխանը ու նրա որդիներից Ռուբենը մահացան բյուզանդական գերության մեջ, մինչդեռ մյուս որդին՝ կարողացել է փախչել և վերադառնալ Կիլիկիա։

4/ 1216 թ. Լևոն II-ը գրավում է Անտիոքը՝ զահին նստեցնելով Ռուբեն-Ռայմոնդին, ինչպես նախատեսված էր 1194 թ. պայմանագրով։

5/ Լևոն II-ը կապեր է հաստատել Սրբազան Հռոմեական կայսրության (Գերմանիայի) կայսր Ֆրիդրիխ Շիկամորուսի հետ, որը խաչակիրների առաջնորդներից էր։

6/ Հեթում I-ի գահակալության ժամանակաշրջանում Կիլիկյան հայկական թագավորության գոյությանը սպառնում էին թյուրքմենական ցեղերի (կարամանների) արշավանքները։

20. Նշված տարբերակներից ընտրե՛ք ճիշտ պնդումները։

1/ Արևելահայերի ազգային համախորհրդակցությունը ձևավորեց գործադիր մարմին՝ Հայոց ազգային խորհուրդ։

2/ Արևմտահայերի ազգային խորհրդի առաջին նախագահն էր Ավետիս Ահարոնյանը։

3/ Ժամանակավոր կառավարության կողմից ընդունված որոշումներով իրավական բովանդակություն է ստացել «Թուրքահայաստան»՝ Արևմտյան Հայաստան անվանումը։

4/ Այսրկովկասում 1917 թ. վերջին բոլշևիկյան իշխանություն հաստատվեց միայն Թիֆլիսում Ս. Շահումյանի գլխավորությամբ։

5/ 1918 թ. ապրիլի 9-ին Սեյմը հայտարարեց իր անկախության և Անդրկովկասյան Ժողովրդավարական Դաշնային Հանրապետության ստեղծման մասին։

6/ Մայիսյան հերոսամարտերի ժամանակ Ղարաքիլիսայի կռվում հայերի հաղթանակն այնքան տպավորիչ էր, որ զարմացրել էր անգամ թուրքերին։

7/ Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդում 1918 թ. մայիսի 28-ին որոշվում է պատվիրակություն ուղարկել Տրապիզոն։

8/ Բաթումի պայմանագրով որոշվում է ՀՀ-ի Օսմանյան կայսրության, Ադրբեջանի և Վրաստանի հետ ունեցած սահմանները։

Հանրապետական օլիմպիադայի
Հանձնաժողովի նախագահ՝ պ.գ.թ. Գևորգ Կեսոյան

03.12.2025 թ.